

ՅՏԴ 001  
ԳՄԴ 70  
Կ-203

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

Կ-203 Կանթեղ 2: Գիտական հոդվածների ժողովածու.-  
Գիրք 2(27). Երևան, Ասողիկ, 2006.- 265էջ:

**Գլխավոր խմբագիր**

Լիլիթ Արզումանյան բանասիրական գիտ. դոկտոր

**Խմբագրական կոլեգիա**

Յովհաննես Բարսեղյան բանասիրական գիտ. դոկտոր  
Սեդա Գասպարյան բանասիրական գիտ. դոկտոր  
Ելենա Կարաբեգովա բանասիրական գիտ. դոկտոր  
Յենրիկ Յովհաննիսյան արվեստագիտության դոկտոր  
Գագիկ Ղազինյան իրավաբանական գիտ. դոկտոր  
Աշոտ Մելքոնյան պատմական գիտ. դոկտոր  
Վահե Ստեփանյան իրավաբանական գիտ. դոկտոր  
Արմեն Այվազյան քաղաքական գիտ. դոկտոր

---

ГОСУДАРСТВЕННАЯ АКАДЕМИЯ УПРАВЛЕНИЯ РА  
КАНТЕХ — СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ

PUBLIC ADMINISTRATION ACADEMY OF RA  
KANTEGH – COLLECTED ARTICLES

Կ  $\frac{1401000000}{0136(01)-2006}$  2006

ԳՄԴ 70

ISBN 99941-43-98-0

© Արզումանյան Լ., 2006 թ.

Կ. Աբրահամյան - Բառակազմության համալիր միավորների խնդրի շուրջ (ռուսերեն) .....	109
---	-----

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Ս. Հարությունյան - Մշակութային կյանքի վերելքն Արցախում 19-րդ դարի երկրորդ կեսին .....	113
Վ. Վիրաբյան - Միլիցիան, ՆԳՆ մարմինները և հանցավորության, պետական-պաշտոնական դիրքի չարաշահումների դեմ պայքարի հիմնախնդիրները 1918-1920թթ. ....	125
Ս. Փայասյան - Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունը Խարբերդում և հարակից շրջաններում .....	134
Ա. Գասպարյան - Առաջին արաբական կոնգրեսը .....	142
Ց. Մալխասյան - Եվրոպական քաղաքակրթության ձևավորման ու զարգացման հիմնական փուլերը .....	148
Վ. Հախվերդյան - Ետխորհրդային երկրների ինտեգրացման գործընթացները .....	157
Ք. Պետրոսյան - Հայրենիք-սփյուռք մշակութային առնչությունները 1991-2000 թթ. ....	165
Լ. Մկրտումյան - Գանձակի խանության հոգևոր թեմերը XIX դարի սկզբին .....	178

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Մ. Վարդազարյան - Ազգային անվտանգության հասկացությունը .....	183
Ա. Բարսեղյան - ՀՀ տնտեսական քաղաքականության հիմքային և փոփոխական գործոնները .....	188

**ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ի. Խանամիրյան - Կախարդական հեքիաթը որպես մերդաշնակ անձի զարգացման կատալիզատոր (ռուսերեն) .....	196
Դ. Հայրապետյան - Ռիդեղային գրոհը որպես կրեատիվ պոստեմցիալի զարգացման տեխնիկա .....	209
Հ. Գրիգորյան - Դեռահասների վարքի շեղումները և դրանց հաղթահարման մի քանի միջոցները .....	215
Կ. Ոսկանյան, Մ. Մազմանյան - Ավագ նախադպրոցականի (6-7տ.) հասկացական, վերացական մտածողության դրսևորումները	

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԳՐՈՅԸ ՈՐՊԵՍ ԿՐԵԱՏԻԿ  
ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱ

Բառարանում գտնում ենք ուղեղային գրոհի հետևյալ բացատրությունը. «Ստեղծագործական ակտիվության և արդյունավետության խթանիչ մեթոդ, խորհրդակցությունների անցկացման տեխնիկա. որի ընթացքում խումբը ձգտում է գտնել կոնկրետ խնդրի լուծում մասնակիցների կողմից սպոնտան առաջարկված բոլոր մտքերի կուտակման միջոցով»: (4 էջ 218) Եթե փորձենք միավորել տարբեր աղբյուրներից վերցված մոտեցումները, ապա կարելի է տալ հետևյալ ձևակերպումը՝ «Ուղեղային գրոհ»-ը խմբային կրեատիվ մտածողության գործընթաց է, իսկ ավելի ճիշտ խմբից կարճ ժամանակահատվածում մեծ քանակությամբ մտքեր ստանալու մեթոդ: Որպես նորմա համարվում է 1,5 ժամում (2 ակադեմիական ժամ) մոտ հարյուր նոր մտքերի գեներացիան: (2)

Առաջին անգամ «Ուղեղային գրոհը» բնութագրվել է Ալքս Օսբորնի «Applied Imagination» գրքում, (Alex Osborn, 1953): Օսբորնը պնդում էր, որ ծնվող մտքերի քանակության հետ գիտակցաբար գործառելու համար երկու սկզբունք կա. հետաձգված քննադատական գնահատման և առաջարկված մտքերի քանակության ավելացումը բերում է որակական փոփոխության:

Նա ձևակերպել է ո

ւղեղային գրոհի անցկացման հետևյալ կանոնները.


- ✓ միջոցառումը պետք է անցնի ոչ ֆորմալ միջավայրում,
- ✓ պետք է դրդել մասնակիցներին ազատ ինտելեկտուալ ինքնաարտահայտման,
- ✓ ոչ ոք չի կարող քննադատել մյուսների մտքերը,
- ✓ ինչքան անհավանական է առաջարկված գաղափարը, այնքան լավ,
- ✓ խմբին հետաքրքիր է մասնակիցներից յուրաքանչյուրի կարծիքը,
- ✓ բոլոր մասնակիցներն ունեն հավասար կարգավիճակ: (1, 2)

Ուղեղային գրոհի կազմակերպման մի քանի ձևեր կան: Կներկայացնենք Օսբորնի կողմից առաջարկված դասական տարբերակը: Այն ընդգրկում է մի քանի փուլ:

1. Նախապատրաստում: Խնդրի ընտրություն և նրա մշակում անհատական ռեակտիվ միջոցներով: Այսպիսի նախապատրաստական աշխատանքը հնարավորություն է տալիս մենեջերին գնահատել խնդրի էությունը և

հետևություններ անել խմբային աշխատանքի հիմնական ուղղությունների վերաբերյալ: Այս փուլի ավարտին կազմվում է կրեատիվ աշխատախումբը:

2. Ուղեղային գրոհի գործընթացը՝ Ներածական՝ մոտ 15 րոպե: Վարողը նշում է մեթոդի էությունը, բացատրում է կանոնները և հայտարարում խնդիրը: Խնդիրը գրառվում է գրատախտակին: Վարողը բացատրում է ընտրված թեմայի



առաջադրման պատճառը, ապա խնդրում մասնակիցների առաջադրել խնդրի ձևակերպման իրենց տարբերակները որոնք նույնպես գրառվում են գրատախտակին:

Մտքերի գեներացիա: Մասնակիցները ազատորեն արտահայտում են իրենց մտքերը: Երբ տեղի է ունենում դադար վարողը խնդրում է նայել գրատախտակին և փոքրիկ մտածել: Ապա բաժանվում են ենթահարցադրումներով թերթիկներ:

3. Ամփոփում, որը կարող է լինել երկու տիպի.

**Սխեմա 1**

➤ «Դասական» տարբերակ. վարողը շնորհակալություն է հայտնում մասնակիցներին և հայտնում, որ առաջադրված մտքերը կտրամադրվեն մասնագետների, որոնք կգնահատեն նրանց առաջարած մտքերը գործնական կիրառման տեսանկյունից:

➤ «Չեչտացված» տարբերակ, որի ժամանակ իենց մասնակիցների կողմից էլ կատարվում է մտքերի գնահատումը: (2)

«Ուղեղային գրոհի» գործընթացի ալգորիթմը պատկերված է սխեմա 1-ում:

Փորձենք ձևակերպել արդյունավետ «ուղեղային գրոհի» 10 չափանիշներ:

1. Խումբը կազմված է 6-12 հոգուց: Եթե մասնակիցները շատ են, ապա նպատակահարմար է բաժանել նրանց երկու խմբի, եթե քիչ, ապա գրոհի արդյունավետությունը ամենայն հավանականությամբ ցածր կլինի: Զրավիրեց

տարբեր մարդկանց, անպայման չէ, որ նրանք մասնագետ լինեն տվյալ ոլորտում, կարևոր է, որ լինեն վառ, հետաքրքիր, աշխույժ մարդիկ:

2. Մասնակիցներից մեկը (ոչ ղեկավարը) ընտրվում է վարող, որի խնդիրն է հետևել կանոնների պահպանմանը:

3. Եվս մեկը ընտրվում է գաղափարների նշման համար: Բոլոր արտահայտված մտքերը պետք է գրի առնվեն: Զուգահեռ կարելի է նաև աուդիոձայնագրություն վարել:

4. Եթե խմբի անդամները ծանոթ չեն տեխնիկայի հետ, օգտակար կլինի սկզբում անցկացնել 10 րոպեանոց սեանս պարզ թեմայի շուրջ:

5. Թույլատրված է ցանկացած միտք, նույնիսկ անենատարօրինակ և ծիծաղելի: Արգելված են մնան արտահայտությունները, ինչպիսիք են՝ «գունարը չի բավարարի», «ղեկավարությունը չի ընդունի» և այլն:

6. Գրոհի ժամանակ մասնակիցները մի կողմ են դնում բոլոր պաշտոնական իրավասությունները: Ղեկավարը ավելի լավ է նույնիսկ չնստի սեղանի շուրջ և զնահատականներ տա:

7. Հարկավոր չէ խորանալ առաջարկված գաղափարի զարգացման մեջ, բավարար է միայն այն ձևակերպել:

8. Տևողությունը 20-30 րոպե: Ցանկալի է գրոհն ավարտել ակտիվ փուլում և չսպասել լիովին անկման:

9. Ավարտին գաղափարների ցանկը տրվում է մասնակիցներին, որպեսզի նրանց կարողանան ավելացնել մտքեր, որոնք հաճախակի առաջանում են ավարտից հետո:

10. Դասակարգումը, զարգացումը և զնահատումը իրականացվում է ավելի ուշ և ցանկալի է մեկ ուրիշ խմբի կողմից: (5)

Հատկապես իր, թվում է թե, հեշտությամբ և մատչելիությամբ ուղեղային գրոհը դարձավ տարածված: Սակայն գրականության մեջ բացակայում է ուղեղային գրոհի լիարժեք մեթոդական բնութագրումը, որը թույլ կտար սովորական մարդուն այն օգտագործել ստեղծագործական խնդիրների լուծման համար: Բացի «մտածել օրիգինալ», «հրաժարվել ստերեոտիպներից» կոչերից աղբյուրներում չեն առաջարկվում միջոցներ, թե ինչպես ազատվել այդ ստերեոտիպներից, որոնք ենթագիտակցություն են խրվել դեռևս մանկուց:

Ահա այց բացը լրացնելու համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն սխալներին, որոնք առավել հաճախ են հանդիպում ուղեղային գրոհի անցկացման ժամանակ:

➤ Բարդ խնդիրը չի բաժանվում ավելի պարզ մասերի:

Օրինակ եթե խնդիրը ձևակերպվի այսպես՝ «Ինչպես հաղթել ընտրությունների ժամանակ», ապա արդյունքում կստացվի մոտավորապես հետևյալը՝ «իրականացնել հեղափոխություն»: Սակայն եթե խնդիրը բաժանել մասերի և մաս առ մաս ենթարկել գրոհի, ասենք՝ «Ինչպե՞ս գտնել հովանավորներ»,

«Ինչպե՞ս կազմակերպել քարոզիչների աշխատանքը», «Ինչպե՞ս պայքարել հակառակորդի սև PR ծրագրի դեմ», ապա կատարվի լիովին այլ արդյունք։ Ուղեղային գրոհը, հավանական է, արդյունավետ է ավելի պարզ, մեկ-երկու քայլ խնդիրների դեպքում:

➤ «Տաքացման» բացակայությունը:

Բավարար չէ վարողի պարզապես արտահայտությունը՝ «Մենք սկսում ենք ուղեղային գրոհը» և թեմայի ներկայացումը: Անհրաժեշտ է մասնակիցների «տաքացում» և սոցիալական դիրքերի հավասարեցում: Մասնագետները օրինակ խորհուրդ են տալիս հանգցնել լույսը, գրոհն անցկացնել (եթե հնարավոր է) գիշերը, գրոհից առաջ բոլոր մասնակիցներին տալ 30 րոպե լավ կոնյակ (Սա լիովին լուրջ): Կան մեծ կազմակերպություններ, որտեղ կրեատիվ մեներձեղը վերցնում է գումար և «տաքացման» ժամանակ ամեն արտահայտած մտքի հեղինակին տալիս սիմվոլիկ գումար: Արդյունքում ստեղծվում է անկաշկանու մթնոլորտ, որից հետո սկսում է բուն գրոհը:

➤ Սի շարք աղբյուրներում նշվում է այն, որ պետք է նախ և առաջ մշակել խիստ կանոնակարգ: Ասենք կամ մասնակիցները արտահայտվում են հերթականությամբ, կամ վարողն ինքն է խոսք տրամադրում: Սխալ է: Մասնագետների վկայությամբ, գրոհը համարվում է սկսված, երբ մասնակիցները սկսում են իրար ընդհատելով գոչել: Ընդ որում գոռում են մոտավորապես այս «Պատռված կոշիկ...», «Յեռախոսային խցիկ ...», «Ռեստորան կոշիկի ձևով ...» և մնան այլ չկապակցված մտքեր: Սա հենց նշանակում է, որ գրոհի նպատակը կատարված է՝ ենթագիտակցությունը ճեղքված է, և այս պարագայում ցանկացած ռեզլամենտ արմատապես կապամի ողջ գործընթացը:

➤ Ստացված գաղափարների վերլուծության բացակայություն:

Ենթադրենք գրոհը արդյունավետ ավարտվել է, և մենք ստացել ենք ինչ-որ բավարար քանակի աղեկվատ մտքեր: Կարելի է օգտագործել հետևյալ պարզ տեխնիկան: Ընդունենք, որ գրոհի արդյունքում ստացվել են 3 գաղափարներ մենք կազմում ենք հետևյալ աղյուսակը, որտեղ դիտարկվում են մտքերի համադրությունները:

	Գաղափար 1	Գաղափար 2	Գաղափար 3
Գաղափար 1			X
Գաղափար 2	X		
Գաղափար 3			X

Յավանական է ոչ բոլոր համադրությունները հաջող կլինեն, սակայն այսպիսի մեխանիկական միջոցով հնարավոր է ստանալ մի շարք որակապես նոր լուծումներ: (6)

Սրանք էին այն հիմնական գաղափարները, որոնց շուրջ կառուցվում է «ուղեղային գրոհ»-ի կրեատիվ մեթոդը, որն իր կենդարյա պատմության ընթաց-

քում հասցրել է լայն տարածում գտնել և համարվում է մտքերի գեներացիայի դասական տեխնոլոգիա:

Արդյոք կրեատիվ տեխնիկայի շարունակական կիրառման ժամանակ փոխվում է անձը՝ անձի անհատական առանձնահատկությունները, կրեատիվ պոտենցիալը, մտածողական ոճերը և արդյոք դրանք ինչ-որ կերպ ազդում են խմբային գրոհում անձի մասնակցության և ընդհանուր գրոհի արդյունավետության վրա, այս ուղղությամբ բացակայում են փորձարարական հետազոտությունները:

Ահա թե ինչու մենք որոշեցինք ուսումնասիրել կրեատիվ աշխատանքի մասնակցի անձը՝ նրա կրեատիվ պոտենցիալի փոփոխությունները ուղեղային գրոհի ոչ միանգամյա կիրառման ժամանակ:

**Հետազոտության ընտրանքը** - աշխատանքը կազմակերպվեց երկու խմբերում.

➤ Երիտասարդ ֆիզիկոսներ - ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի առաջին կուրսի հատուկ խումբ

➤ Երիտասարդ շախմատիստներ – Շախմատի ակադեմիայի սաներ:

Յուրաքանչյուր խմբում ընդգրկված էին 10 մասնակիցներ:

**Հետազոտության նպատակը** – ուսումնասիրել անձի կրեատիվ պոտենցիալի փոփոխությունները ուղեղային գրոհի մեթոդով շարունակական աշխատանքի ժամանակ:

**Հետազոտության օբյեկտը** – ուսումնասիրվել են հետևյալ արդյունքները.

➤ անձի կրեատիվ պոտենցիալը (ըստ Տորրենսի), որը հետևյալ հատկությունների հանրագումարն է. *ինարամտություն, միավորման ընդունակություն, ոչ ստանդարտ մտածողություն, ազատ զուգորդումների ստեղծում*: Կրեատիվ պոտենցիալը ուսումնասիրվել է թեստ-ռեթեստի միջոցով գրոհների սեանսներից առաջ և հետո: (3)

➤ Ուսումնասիրվել են նաև գրոհի քարտեզները և վեր հանվել այն փոփոխությունները, որոնք կատարվել են ամեն սեանսի արդյունքում:

**Հետազոտության արդյունքների վերլուծությունը:**

Արյուսակ 1-ում համապատասխանաբար ներկայացվում են կրեատիվ պոտենցիալի թեստ-ռեթեստի միջին արդյունքները երկու խմբերում:

*Արյուսակ 1*

<i>Ֆիզիկոսներ</i>					
	Հնարամտություն	Միավորման ընդունակություն	Ոչ ստանդարտ մտածողություն	Ազատ զուգորդումներ	Կրեատիվ պոտենցիալ
Թեստավորում	16	17	33	27	93
Ռեթեստավորում	16	18	35	34	104
<i>Շախմատիստներ</i>					
	Հնարամտություն	Միավորման ընդունակություն	Ոչ ստանդարտ մտածողություն	Ազատ զուգորդումներ	Կրեատիվ պոտենցիալ
Թեստավորում	15	18	25	25	83
Ռեթեստավորում	17	18	31	30	96

Ինչպես նկատելի է արդյունքներից երկու խմբերում էլ կրեատիվ պոտենցիալի ընդհանուր ցուցանիշը աշխատանքի ընթացքում աճել է՝ ընդ որում նույն քանակական չափով: Ավելի հետաքրքիր է դիտարկել թե կրեատիվ պոտենցիալի հատկապես որ բաղադրիչներն են փոփոխության ենթարկվել: Ինչպես նկատելի է արդյունքներից առաջին երկու ցուցանիշները (ինարամտություն և միավորման ընդունակություն) ավելի կայուն են և զարգացման չեն ենթարկվում, իսկ մյուս երկուսը (ոչ ստանդարտ մտածողություն և ազատ զուգորդումներ ստեղծելու ընդունակություն) զարգանում են՝ իրենց հերթին ապահովելով կրեատիվ պոտենցիալի աճը:

Եթե մենք անդրադառնում ենք խմբային մտային քարտեզների վերլուծությանը, ապա կարելի է գալ հետևյալ եզրակացություններին.

Գրոհի շարունակական սեանսների ընթացքում մասնակիցները սովորում են

➤ խնդրի լուծման ընթացքում մտքի ընթացքը հանձնել թղթին, կազմել անհատական մտային քարտեզներ,

➤ առաջարկված խնդրի շուրջ ծավալել խմբային մտային աշխատանք,

➤ նկատել միջխնդրային կապերը և դրանք պատկերավոր արտահայտել,

➤ դուրս գալ ունեցած գիտելիքների համակարգից և նույնիսկ չհիմնավորված, սակայն նոր մտքեր ծնել,

➤ կենտրոնական խնդրից ծնված հիմնական լուծումների տարբերակումներ կատարել,

➤ ինքնուրույն զարգացնել ամեն ենթախնդիր, սակայն հարկ եղաւ պարագայում մեկ ենթախնդրից հղում կատարել մեկ այլ ենթախնդրի.

*Այսպիսով մենք ելնելով համաշխարհային կրեատիվ հոգեբանական հետազոտություններից և ներ վերլուծություններից՝ կարող ենք առաջարկել կիրառել «Ուղեղային գրոհ»-ի տեխնիկան՝ որպես կրեատիվ պոտենցիալի զարգացման մեթոդ:*

### *Գրականություն*

1. Альтшуллер Г. С. - Алгоритм изобретения, М. 1973г.
2. Грин Э. - Креативность в паблик релейшнз, СПб, Нева 2003г.
3. Зиверт Х. – Тестирование личности, М. 1997г.
4. Психология, словарь – под ред. Петровского А. В, М 1990г.
5. <http://www.kolesnik.ru/2005/brainstorming>
6. <http://www.scottberkun.com/essays/essay34.htm>